



Ա. Թ. Թ Ե Ա Ր Գ Ո Յ Շ

(Հայկական ՍՍԲ գիտուրյան
գաստակավոր գործիչ)

Մ Խ Ի Թ Ա Ր Գ Ո Յ Շ

Հայկական Գոշը հայ մտավոր կուլ-
տուրայի պատմության մեջ
հանդիսանում է ականավոր
գեմքերից մեկը՝ նա հայտնի է
իրզն հայ իրավունքի առաջին
ձևակերպողը և լավագույն տեսարանը իրա-
վունքի խնդրում, մրաւ կողմից՝ որպես առա-
կագիր Մխիթար Գոշն զրադիկել է իրավուն-
քի խնդրով և առաջինը ավել հայ ժողովոր-
դին զրված օրենք. Նա չի ուսումնասիրել հայ
իրավունքը, նրա սոցիալական բնույթը: Հայ-
կական իրավունքը Մխիթարից առաջ նույն-
պես աւամունասիրության առարկա չի դար-
ձել, ինչպես և Մխիթարից հետո էլ երկար
ժամանակ անուշագրության է մատուցել:

Հայկական իրավունքի առաջին հետազո-
տությունը կատարել է Վահան վարդապետ
Բաստամյանը մի ընդարձակ առաջարանի
մեջ (180 էջ), որը կցել է Մխիթար Գոշի «Դա-
տաստանագրքի» 1880 թվականի հրատարա-
կության այս վերնագրով՝ «Մխիթարայ Գոշի
Դատաստանագիրը Հայոց, իրաւաբանական
հետազոտութիւնը Հանդերձ ծանօթութեամբ»:
Բաստամյանի այդ «յառաջարանութիւնը»-ը
տպվել է առաջ, ինչպես հաղորդում է Հեղինակը, «Փորձա ամսագրում, 1879 թվականի
N Ա VI, VII — VIII և IX-ում: Այս առաջա-
րանում հեղինակը զրում է, որ Անհատանի
հայերն ունեցել են իրենց ինքնավարության
օրենքները և այդ օրենքները կազմելիս օգ-
տագործել են Գոշի Դատաստանագիրը և
ներկայացրել Միջամունդ թագավորին, որը
հաստատել է 1519 թվականին: Միջամունդի
հաստատած օրենսգիրը կրում է հետևյալ
վերնագիրը. «Օրենքներ Հայոց իրավանց, Ա-

հաստանի բարեկալաշտ Միջամունդ առաջին
թագավորից հավանության սաացած և նրա
հրամանով հաստատած, և նրա թագավո-
րական մեծության հրամանով նրանց մայրե-
նի լեզվից լատիներեն թարգմանած և բնա-
գրից ուղղի ընդօրինակածք¹: Բաստամյանը
հայտնում է այն կարծիքը, որ մինչև Մխի-
թար Գոշը հայությունը չի ունեցել աշխար-
հական օրենսգիրը կամ զատաստանագիրը²:
Հեղինակն այնուհետև ցուց է տաիս, թե
ե՞ր և ո՞վեր օգտագործել են Դա-
տաստանագիրը: Մխիթարից հետո էլ մին-
չև Սմբատ Գունզատարը ոչ ոք փորձ չի
արել և չի մտածել «օրինել նոր ազգային
սեփական օրենսգիրը կամ զատաստանագիրը
կամ խմբագրել ժողովածու հին հայկական
օրենքներից և իրավաբանական ավանդու-
թյուններից³: Մխիթար Գոշի նույն Դատա-
տաստանագիրըն օգտագործել է Սմբատ Գունզա-
տարը իր Օրենսգրի 2-րդ մասում և հերբ-
փում է Մկրտչանի այն կարծիքը, թե Գունզա-
տարը թարգմանել է Անտիոքի օրենքները⁴:
Մխիթար Գոշի զատաստանագիրը օգտա-
գործել է Քարթալինայի թագավոր Վախտանգ
6-րդը. 18-րդ դարում նա հորինել է Վրացե-
րին լեզվով օրենսգիրը, որ կոչվել է «Սա-
մարթիւն ծիգնի Վախտանգ մեփիսա» («Դա-
տաստանագիրը Վախտանգ թագավորի») խո-
րագրով: Բաստամյանը այսպես է ըացա-

1. «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրը Հայոց»,
էջ 26:

2. Նույնը, էջ 52:

3. Նույնը, նույն էջը:

4. Նույնը, էջ 59:

տրում Վախտանգի այդ քայլը. «Կամենալով մի կողմից ավելի շատ նյութեր ունենալ ձեռքի տակ, մյուս կողմից՝ տալ Վրաստանի մեջ ընակվող բազմաթիվ հայերին նոցա կրանքին և սովորույթներին համար օրենքներ՝ Վախտանգ թագավորը խնդրեց էջմիածնից հայոց օրենքներ և թարգմանել տալով վրացերեն՝ մուծեց նոցա յուր Սամարթիս ծիգնի դատաստանագրքի մեջ իրեն առանձին ամրող երրորդ մասն»⁵:

Թաստամյանը տալիս է իր եզրակացությունը, որ Գատաստանագիրը չի կարող դիմանալ գիտական քննության, բայց նրա նշանակությունը մեծ է որպես հայ մատենագրության մեջ միակ իրավարանական գրքածք։ Գունդատարի նշանակությունը հենց այն է, որ նա առաջինը թողեց հայ գրականության մեջ գրավոր կոթող հայ հին իրավունքի մասին։

Հայ գրականության մեջ թաստամյանից հետո այդ ուղղությամբ լույս են տեսել մի շարք գրքեր՝ 1894 թվականին Ս. Բահմբերյանը հրատարակել է «Հողային և անձնական իրավունքը հին Հայաստանում», 1905 թվականին Շուշում լույս է տեսնում «Հայոց եկեղեցական իրավունքը ուսումնասիրությունը, ապա Խ. Սամվելյանի մի շարք ուսումնասիրությունները՝ 1905-ին — «Գնմամը ու առևանգմամը ամսունություն», 1907-ին — «Մխիթար Գոշի Գատաստանագիրը և հին քաղաքացիական իրավունքը», 1910-ին — «Հայ ժառանգական իրավունքը» և 1939 թվականին — «Հին հայ իրավունքի պատմությունը» (Արմֆանի հրատարակությամբ), Արևեն և պիտիկոպս Ղլտճանը 1913 թվականին հրատարակում է «Հայոց հին իրավունքը» գիրքը, իսկ 1918 թվականին լույս է ընծայում Սմբատ իշխանի «Գատաստանագիրը», կցելով 8 էջից բաղկացած առաջարան՝ Ղլտճանն այստեղ հերքում է գերմանացի Կարստի թյուր կարծիքը Սմբատի Գատաստանագիրի մասին, որպես թի Սմբատի այդ գիրքը փոխառություն է օտար աղբյուրներից՝ ասորականից, բյուզանդականից և այլն։ Ղլտճանը այն կարծիքն է, որ թի՝ Սմբատը և թի՝ Մխիթար Գոշը իրենց Գատաստանագիրը կազմելիս օգտագործել են «Հայոց Կանոնագիրք»-ը, որ գոյություն է ունեցել ավելի վաղ, քան Գոշի աշխատությունը։ Մյուս կողմից Ղլտճանը մերժում է Գոշի աղքցությունը Սմբատի վրա։

Թացի հայերն ուսումնասիրություններից, լույս են տեսել նաև ուսակերն և օտար լեզու-

5. Վահան վրդ. Թաստամյան — «Մխիթարայ Գոշի Գատաստանագիրը Հայոց, յառաջարանութիւն», էջ 104 — 105։

6. Նույնը, էջ 180։

ներով աշխատանքներ հայ իրավունքի մասին։

Ուսւերեն աշխատությունները, որոնք շատ չեն, մեծ մասամբ պատկանում են հայ հեղինակի գրչին և շատ անշան շափով՝ ուսա իրավագիտի։ Այսպես՝ 1870 թվականին լույս է տեսել Ալեքսեևի «Արմանակ յ սահմանագիրը» գիրքը, որի մեջ նույնական հայությանը է նույն կարծիքը, թի հայ իրավունքը թարգմանությունն է Հուատինանոսի օրենքներից։ Ռուս հայութի իրավարան ն. Կովալինին 1890 թվականին հրատարակել է «Զակը և օրենքը և այլն կարծիքը» գիրքը, որի մի գլուխ գործը «Վլայն արմանակ յ սահմանագիրը» է Հուատինանոսի օրենքներից։ Ռուս հայութի իրավարան ն. Կովալինին 1890 թվականին հրատարակել է «Զակը և օրենքը և այլն կարծիքը» գիրքը, որի մի գլուխ գործը «Վլայն արմանակ յ սահմանագիրը» է Հուատինանոսի օրենքներից։ Այսպիսակ է հայ իրավունքն 1919 թվականին լույս է տեսել Ս. Եղիազարյանի «Исследование по истории армянского права публичного и частного» գիրքը, որ վերաբերում է 10—13-րդ դարերի հայ սոցիալական կանքին և իրավունքին, և Մելքոնեթրեկը հրապարակել է «Об источниках драгоценного армянского права» և Խ. Սամվելյանը՝ «Очерки по сбыточному семейству праву армян» 1901 թվականին Ռուսական լույս են տեսել անցյալում հոգվածներ Մխիթար Գոշի մասին «Юридическое обозрение» ամսագրում «Семейственное право по Мхитару Гошу» (Ս. Արքունու) և «Судебник Мхитара Гоша» (Հ. Տեր-Հովհաննիսյանի), ուսաերեն լույս է տեսել նաև «Հայոց կանոնագիրը» և «Судебная книга Мхитара Гоша и канонов» գիրքը։

Հայ իրավունքը հետազոտել են նաև օտար գիտականներ։ Առաջին անգամ Քիները, գերմանացի մի գիտական, մի աշխատանք է հրապարակում հայ և վրացական օրենքություն մասին։ Այս աշխատանքը վերաբերում է Վախտանգի գատաստանագրքի մասին 1829 թվականին Փարիզում գրանսերին հրատարակված տեղեկություններին։ Հայ իրավունքի մասին հետազոտություն է գրում Ֆ. Բիշովը։ Ինչպես հաղորդում է Բաստամյանը, գոկտ. Ֆերդինանդ Բիշովի այդ գիրքը, որ կրել է „Das alte Recht der Armenier in Lemburg“ («Հին հայ իրավունք Լեմբերգի հայերի խորագիրը և լույս է տեսել 1862 թվականին Վիեննայում, հրապարակվել է լինական Միդիանունդ թագավորի հաստատած կեհաստանի հայության օրենսդրի մասին։ Բաստամյանը, ինչպես վերը նշեցինք, ցոյց է տալիս, որ Լեմբերգի հայերը կետ առ կետ օգտագործել են Գոշի Գատաստանագիրը և հերքում է Բիշովի այն թյուր կարծիքը, թի Միդիանունդի կողմից հաստատված կեհաստանի հայության օրենսգիրը մեծ մասամբ փոխառություն է շին և նոր Կտակարաննե-

րից, Բաստամյանի պահապակում է նաև Հ. Ինձիքյանին, որը «Հանձն մի տոել մի թիթի աշխատություն» գրել և ցույց տալ գերմանացի գիտականի այդ սիմալու թիշովի սիմառ մերկացնում է Գրիգոր Արծրունին, որը «Հայկական աշխարհ»⁷ ամսագրում տպած իր մի հոգվածով հայտարարում է, որ Ամբերդի (Ահճատան) Հայերի ինքնավարության օրինքները բազված են Միտիմար Գոշից «Թիշում», — գրում է Բատումյանը, — ու Արծրունին միայն արիշից լսած կարծիքն է Հայոցում, բայց և այնպես այդ կարծիքը շատ հիմնավոր է⁸:

Հայ իրավունքի փոխառնվածության այդ անընդունելի գրույթը կրկնում է գերմանացի մի ուրիշ իրավագեն՝ Զ. Կոչկերը, որը 1888 թվականին հրատարակում է „Das Recht der Armenier“ («Հայերի իրավունքը»), իսկ 1906-ին՝ „Alt-yrisches und armenisches Recht“ («Հին սիրիական և հայկական իրավունքը») աշխատությունները, որոնց մեջ Հայ իրավունքը համարում է փոխառնվածն առար ժողովարգներից: Նույն ոգով և ուղղությամբ Հայ իրավունքը ուսումնասիրել են Գավիդ Մյուլլերը և Վ. Ալպառիցերը, որոնք Գոշի Դատաստանագիրը համարում են փոխառնվածն Մովսիսականությունից և Թալմուդից: Առաջնի աշխատությունը կրում է „Das Mosaïsche Recepti-nricht in armenischen Recht“ (1906, Wien) Խորագիրը, իսկ Կրերարգինը՝ „Beitrag zur mosaischen Recep-tion in armenischen Recht“ (1906, Wien) Խորագիրը:

Յո՞ւ. Կարստը հրատարակել է երկու աշխատություն Հայ իրավունքի մասին, առաջինը 1905 թվականին, Սմբատ Գունդստարլի օրինագրի մասին, „Sempadischen kodex aus dem XIII Jahrhundert“ երկրորդը՝ 1906 թվականին՝ „Grundriss der Geschichte des armenischen Rechts“ վերնագրերով: Յո՞ւ. Կարստը այս աշխատությունների մեջ Հետեւում է վերը նշած գերմանական իրավագիտներին և Հայ իրավունքը համարում սոսկ փոխառնվածներ ասորականից, մովսիսականից, բյուզանդականից և այլն:

Հայ իրավունքի հետազոտման ուղղությամբ աշխատանքներ կատարվել են նաև ֆրանսիական գրականության մեջ. Հայ իրավագետների հաղորդմամբ այդ կարգի գիտնականներ են Համարլում Ռ. Դարեսար

7. Վահան վրդ. Բատումյան—«Միտիմար Գոշի Դատաստանագիրը Հայոց, յառաջարանություն», էջ 24:

8. «Հայկական աշխարհ», 1870 թ., № 5 և 6 (միացյալ):

9. Վահան վրդ. Բատումյան—նույնը, էջ 28:

(1887 թ.), Կ. Բատմաշյանի «Հայ իրավունքը սկզբից մինչև մեր օրերը» ֆրանսիերն աշխատությունը (1901 թ.): Հայանի են նաև Ե. Գրաւորինի և Վ. Լանգլաւայի աշխատությունները: Գրաւորինը շարադրում է Կիլիկիան Հայ իշխանության պետական կառուցվածքը մասին գիրը, որը կրում է „Etude sur l'organisation politique, religieuse et administrative du royaume de la petite Arménie au temps des Croisades“ վերնագրը: Երկրորդը վերնագրված է „Le trésor des Choses d'Arménie au Cartulaire de la chancellerie royale des Rupéniens“. Գրում Հեղինակը գիտելի է Կիլիկիայի թագավորական վավերագրերի պատճենները, որոնք կատարելի այն ժամանակի առելքադրական համար այդ բնույթի գաշնազը են:¹⁰ Դարեսարի և Բատմաշյանի աշխատությունները նույնպես հիմնված են վերադրության անընդունելի սկզբունքի վրա:

Միտիմար Գոշի Դատաստանագրի մասին խոսենով, և. Սամվելյանը նմանապես պաշտպանում է սուրբ գիտականների վերը բերած փոխառնված արամերծ և անսկզբունք ընկալումը շեշակելով, որ Մովսիսական օրինագրը մուտք են գրծել ոչ միայն Գոշի գրքի մեջ, այն գրանից առաջ Հայ կրոնական իրավունքի մեջ... եկեղեցական ժողովների կանոնական որոշումներում¹¹:

Չի կարելի համաձայնել Հայ իրավունքի ինքնուրույնությունը բացասող այն կարծիքների հետ, որոնք Հայ իրավունքը հոչակում են փոխառնվածն ասորականից, բարելականից, մովսիսականից, բյուզանդականից և այլն: Ճիշտ չի մնի մտածել, որ տոհմային հասարակության իրավական նորմերը պահպանվել են և կիրառվել դասակարգային հասարակության պարմաններում, այն էլ 12-րդ դարում: Պատմությունից հայտնի է, որ ստրկատիրության ժամանակի հույները պայքարում եին հնացած ու մեռած տոհմային հասարակության սովորույթների գեմ: Նույնիսկ այդ պարագան արտացոլվել է գեղարվեստական գրականության մեջ. Էսքիլսը իր «Խնդրակուներ» ողբերգության մեջ դասապարտում է մերձավոր ամուսնությունը, որ տոհմային հասարակությունից ժառանգություն է մնացել ստրկատիրական հասարակության: Կիլիսթները իր ուժորմներով վերը դրեց տոհմային հասարակարգի մնացուկներին: Եթե հասարակությունների մեջ պահպանվում են բարոյական որոշ համանման

10. Պրոֆ. և. Սամվելյան—նույնը, ելքածական, էջ 12—13:

11. Նույնը, նույն տեղում, էջ 35:

նորմեր, այդ դեռ չի կարելի բացատրել փոխառության տևառությամբ։ Գողությունը գառապարտվել և գատապարտվում է բոլոր հասարակությունների մեջ։ և եթե բոլոր դասակարգերի տիրապեսության ժամանակ օրենքների ժողովածուների մեջ գոյություն ունեն օրենքներ զողության դեմ, այդ դեռ չի նշանակում, թե այդ պետական իրավական նորմը ժառանգություն է մովսիսականից։ Իրավական նորմերի միջև նմանությունն անխուսափելի է, որովհետև ժողովուրդներն ապրել և ապրում են դասակարգային հասարակության համանման պայմաններում։ Հոռմեական իրավունքը զարձավ հանրաճանաշ հին հասարակությունների համար, որովհետև նա հարազատորեն դրսնորեց հոռմեական մասնակուր սեփականատիրական հասարակության կենսական պայմանները, այնպես, որ հետագա զարերի մասնավոր սեփականատիրական իրավակարգերում անհամեմատելի է ստրկատիրական իրավակարգի իրավական նորմի նմանություն կարելի է ընդունել համանման հասարակական պայմաններում, իսկ անհամատելի է ստրկատիրական իրավակարգի իրավական նորմերի կիրառումը տուժմային հասարակության մեջ, կամ տուժմային իրավակարգի օրենքները ֆեոդալական հասարակության մեջ։

Հայ ժողովուրդն ունեցել է թե՝ սովորութիւն (անգիր) և թե՝ գրավոր օրենքներ, ինչպես բոլոր ժողովուրդները՝ ասորիները, պարսիկները, հույններն ու բյուզանդացիները։ Հունական և բյուզանդական օրենքները կոչվել են նորմոներ։ Հայկական օրենքը և հունական նորմոն ունեցել են նույն իմաստը։ Հայությունը, ինչպես ցուցը է աւլիս հայ իրավունքի ուսումնասիրությունը, մինչև 12-րդ դարը չի ունեցել հայկական օրենքների ժողովածու, բայց ունեցել է զրավոր օրենքներ։ Մովսես Խորենացին ակնարկում է զրավոր օրենքների գոյության փաստը Հայաստանում։ «Այլ ոչ արդարեւ այսուքիկ կարծեցնեալ ինի, քանզի դատանին և միջոցք լիալ պատրազմացն, և գիր պարսից և յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց և իւրաքանչյուր առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և զաշանց այժմ առ մեզ դատանին անբաւ զրուցաց մատեանք»¹²։

12. «Բայց իրավացի չի լինի արտաս կարծեւը, որովհետեւ պատերազմների միջև եղել են և ժամանակամիջներ, և կային պարսից և հունաց գրեր, որոնցով գրված այժմ դանդում են մեզ մոտ անթիվ քանակությամբ գրություններ, վերաբերյալ դրաւուի և զափառների և լուրաքանչյուր աների սեփականության, և ընդհանուր վեճների և զաշինքների, մանավանդ սեփական ագնամայնության ծագման» (թարգմ. Ստ. Մալխասյանի)։

Օրենքի, կանոնի գոյության մասին հիշում է նաև Փալստոս Բյուզանդացին իր պատմության չորրորդ դպրության 3-րդ գլխում, երբ խոսում է ներական կաթողիկոսի նախաձևությամբ Աշտիշատի ժողովում սահմանած օրենքների ու կանոնների մասին, դրանք որոշումներ են, որ վերաբերում էին թե՝ աշխարհիկ և թե՝ կրոնական կարգերը բարեկարգելու վերաբեցին, կազմեցին, կանոննեցին։¹³ և այլն։

Թեև հին Հայաստանում մինչև 12-րդ դարը չի եղել աշխարհիկ իրավաբանական աշխատություն կամ օրինագիրը, բայց և այնպես սահմանվել են դրավոր կանոններ և օրենքներ, որոնցով զեկավարվել է կյանքը։ Այդ օրենքները մշակվել են հասուլ ժողովածուներում և արձանադրվել ու կիրավովել կյանքում։ Այդ ժողովների մեջ հնագույն Աշտիշատի ժողովն է ուղղվել 12-րդ դարի վերաբեցին և այլն։ Այս ժողովները մշակվել են հասուլ աշխարհիկ աշխատավայրում 443 թվականին, Դիլինում 555 և 648 թվականներին, Պարտավում 768-ին, Սուստ 1243 թվականին, Զագավանում 1270 թվականին և այլն, Այս ժողովներին, որոնք հրամայվել են հոգեմորականության նախաձեռնությունը, մասնակցել է նմանապես հայ աշխարհիկ ավագանին։ Իրենց արտաքին բնույթով այս եկեղեցական ժողովները սահմանել են ոչ միայն կրոնական-եկեղեցական, այլև աշխարհիկ կյանքին ու կենցաղին, հասարակական հարաբերություններին վերաբերող կանոններ, որոնք օրենքի ուժ և ստացել են գործադրվել։

Այս կանոնները 8-րդ դարում ժողովում և օրինագիրը (կանոնադր) է կազմում Հովհան Օձնեցին (717—728 թ. թ.), ինչպես ցուցը է աւլիս և. Սամվելյանը, Հովհան Օձնեցուց հետո հաջորդ դարերում ավելանում են նոր կանոնադրություններ նրա կազմածի վրա։ Կանոնական հավաքածուի աճը կանոնականությունը 10—11-րդ դարերի վերջերին¹⁴։

Այս նշանակում է, որ մինչև Գոշի Դատաստանագիրը Հայաստանում դոյցություն են ունեցել զրավոր օրենքներ, թեկուզ զրանք չեն համարվում «ազգային օրենսգիրք», «Հայկական կողես»¹⁵ կամ իրավաբանական աշխատույթում, ինչպես զրում է Մ. Արեգյանը¹⁶։

13. Ըստգծումներ իմ են և. Սամվելյանի «Յօրինեցին բարի ստուգարանությունից» (օրենք) եկեղեց առաջարկում է այդ բարը հասկանալ «օրենսդրեցին» իմաստով, իսկ Մտ. Մալխասյանը դաւու է զցել «յօրինեցին» և թագմանել է «կարգ ու կանոն սահմանեցին», կազմակերպեցին» (Փամտու Բաւանդ, թարգմ. Մտ. Մալխասյանի, Երևան, 1947 թ., էջ 144)։

14. Պրոֆ. և. Սամվելյան— նույնը, էջ 48։

15. Նույնը, նույն աեզում, էջ 73—74։

16. Մ. Արեգյան— նույնը, հատոր I, էջ 148։

Ինչո՞ւ Հայաստանում չի կազմվել աշխարհիկ ընդհանուր օրենքների մի ժաղավածու, այլ զեկավարվել են վերը նշված եկեղեցական ժողովների կանոնագրություններով։ Այդ երեսոյիթը պետք է բացարկել նրանով, որ Հայաստանում դայտիթյուն չի ունեցել Համակենտրոնացված ամեն մի հայությունում։ Երկիրը բաժանված է եղել վառարարական մասը իշխանության երի— նախարարությունների։ Նույնիսկ 10—12-րդ դարերում դոյտիթյուն ունեին մի բանի մասը իշխանությունների, ինչպատճեն Վաստուրակոսի, Վանանդի (963—1065 թ. թ.), Սյունիքի (970—1170 թ. թ.), Տաշիր Զորագևսի, որի գոյությունը անց մինչև 10—13-րդ դարերը։ Այս կենարունախույս փեսպատկան իշխանությունները ներկայացրել են գրեթե ինքնուրույն պետական կազմակերպություններ—պետություններ պետության մէջ, ունեցել են զեկավարման իրենց դատարանը, օրենքները և այլն։ Պետական արև կառուցվածքի մէջ անհրաժեշտություն չէր զգացվի ընդհանուր պետական օրենքների, հատերար և այլպիսի օրենքների ժողովածուի։ Հոգով հրատարակեց օրենքների առաջին ժողովածուն՝ օրու յարակ յարական կայությունը Հուսակինասուի օրով։ Հրատարակեց իր օրենքները, որովէնտես զրահը ներկայացնում էին ուժին կենարունացված պետություններ և լայնածավալ այդ պետությունները կառավարելու համար ընդհանուր պետական օրենքների կարիքն զգացվեց։ Հարց է ծագում, իսկ ինչո՞ւ օրենքների կարիքն զգացվեց 12-րդ դարում, երբ Հայությունը զորիք էր պետական իշխանությունից և հենց այդ ժամանակ հանդիս եկան Գավիթ Ալավան որպու և Մխիթար Գոշի զատաստանգրիքը։ Հայությունը չէր գատում և անուշանձ կառավարությունը տառական եղանակով գործում էր սելցուկների՝ սելցուկների տիրապետության տակ, որոնք հայերի որպես չէին վարում և զրա հաւեանքով շատավորությունների անաշառ չէին լինում զատավարության ժամանակ, ինչպես Գոշ։ Այդ պահանջն զգացվում է լին Կիլիկիայում և մեր Արևոտի կառավարության մասին ամենահայտնի մեջ Արքայությունը և Մխիթար Իվանե իշխանի օճանդակությամբ։ Տանձատի ձորում ձեռք է բերում սեղ և կառուցում նոր վանք, որ կոչվում է Ներ-Գևաթիկ։ Այստեղ ապրում ու զատությամբ է զբաղվում Մխիթարը և սովորեցնում շատ աշակերտների։ Նա մնուսում է այստեղ, հասնելով խորին ծերության, Հայոց ԱԿԲ (662), այսինքն մեր 1213 թվականին¹⁷։ Սակայն հայտնի չէ Գոշի ծննդյան թվականը։ Մ. Արեգյանը, հիմնվելով պատմագրի այն հաղորդման վրա, թէ Գոշը մեռել է խորին ծերության հասնելով («աղեռեալ և լի աւուրբք— Կիրակոս Գանձակեցի, էջ 207), ենթադրում է, թէ մեռած պետը է լինի 80—85 տարեկան հասակում և զրա հիման վրա նրա մնունդը համարում է 1130 թվականը։

12-րդ դարում Գավիթը, Մխիթար Գոշը և Ամբատ Գունդառարը Հանդիսանում են հայ իրավունքի անդրանիկ շարագրությունները, իսկ նրանու Խամբառացին՝ ստար օրենսգրքի առաջին թարգմանառը։

Մխիթարը Գոշ է կոչվել, որովհետեւ նրա միրուրը ուշ էր բառել («բանզի հեղապան» եկին ալիք նորաբ¹⁸)։ Նրա մասին տեղեկություն հազարված է 13-րդ դարի պատմագրի Կիրակոս Գանձակեցին։ Գանձակ բաղաքից էր Գոշը, «Հովակաւորն այն և մեծիմասն զիառիթիամբ¹⁹։ Մնունները նրան ատիս են ուսման, իսկ երբ արքունիքի և հանունում, նա ձեռնդրվում է կուսակրոն բահանա։ Ուսման ձարավիր հաղեցներու նպատակով զուում է Տափուշ Հովհաննես գիտնական վարդապետի մոտ, բայց մի բաֆարարվում և մեկնուում է Սկ Առան վանքը և սովորում ուսուցիչների մոտ, ապա զնում է Կարին և այստեղ ծանոթանում Թուրթի իշխանի հետ, որը հովանափորում է նրան։ Կարինից վերադառնում է Ամբիկ Հայությունում պետության համրամատում և Հայաստան և զրադվում զիառությամբ։ Նրա իմաստության համրամբ տարածվել էր ամենուրեք, այդ պատճառով շատ աշակերտներ զարի էին նրա մաս սովորերու։ Բայց տաճիկները նեղում են Մխիթարին Աղվանից կաթողիկոսի թելազրանով, ուստի նա հեռանում է Խաչեն զավասի Համբերը, սակայն յսերով Քորթ իշխանի վերազարձի մասին Մխիթարը Համբերից հեռանում է և բնակիլում Քորթ իշխանի կալվածում, Կայյեն զավասի Գևատիկ վանքում, Աղստեղ գետի վրա։ Սասակի երկրաշարժի պատճառով Գևատիկ խարթավում է և Մխիթարը Իվանե իշխանի օճանդակությամբ։ Տանձատի ձորում ձեռք է բերում սեղ և կառուցում նոր վանք, որ կոչվում է Ներ-Գևաթիկ։ Այստեղ ապրում ու զատությամբ է զբաղվում Մխիթարը և սովորեցնում շատ աշակերտների։ Նա մնուսում է այստեղ, հասնելով խորին ծերության, Հայոց ԱԿԲ (662), այսինքն մեր 1213 թվականին¹⁹։ Սակայն հայտնի չէ Գոշի ծննդյան թվականը։ Մ. Արեգյանը, հիմնվելով պատմագրի այն հաղորդման վրա, թէ Գոշը մեռել է խորին ծերության հասնելով («աղեռեալ և լի աւուրբք— Կիրակոս Գանձակեցի, էջ 207»), ենթադրում է, թէ մեռած պետը է լինի 80—85 տարեկան հասակում և զրա հիման վրա նրա մնունդը համարում է 1130 թվականը։

17. «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետ Գանձակեցիոյ», Թիֆլիս, 1903 թ., էջ 208.

18. Նոյեմբեր, էջ 195.

19. Նոյեմբեր, էջ 195, 200 և 207։

Գոշը թողել է հետեւյալ աշխատությունները, որ հիշում է Կիրակոս Գանձակեցին իր պատմության մեջ (էջ 208—209-ում)։ «Համառու մարդաբէութիւն Երեմիայի», «Սուլինչ կանոնս սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն», «Ողբք ի վերայ բնութեան», «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ բնդդէմ ամենայն հերձուածողաց»։ Նա թողել է նաև «Դատաստանագիրք» և «Առակքա աշխատությունները, որոնք ամենաարժեքավորներն են նրա ստեղծագործությունների մեջ»։

Դատաստանագրութիւնից միշտ վերնագիրը հետեւյալն է. «Միխիթարաց Գօշի Դատաստանագիրը Հայոց»:

«Դատաստանագիրք»-ը բաղկացած է երեք մասից. առաջինը վերնագրել է «Նախադրութիւն», երրորդը՝ «Եկեղեցական կանոնք», իսկ երրորդը՝ «Աշխարհական յօդուածք»։ Նախադրությունն ունի 11 գլուխ, երրորդ մասը՝ 124, իսկ երրորդը՝ 130 գլուխ։ Նախադրության առաջին գլուխ մեջ թվում է 12 կետ, որոնցով հիմնավորում է զատաստանագիրքը շարադրենու պատճառները։ Դրանց մեջ հիմնականը Մխիթար Գոշը համարում է Հայերի և մահմեղականների միջև եղած տարբերությունը և մահմեղականների բամբառն ինքնիւրք, թէ քրիստոնյաները զատաստան չունեն։ «Բամբառն գորէնսն Քրիստոսի, թէ զատաստան ոչ կայ ի նմա»։ իսկ Հայերի մեջ շատերը գովում են մահմեղականներին, որովհետև նրանց օրենքն ու զատաստանն արդար են («բազումք են, որ գովեն զայլազգիս, որպէս թէ իրաւացի զատաստան ունին»²⁰)։ Տասներկու պատճառարանությունների մեջ ուշադրության արժանի կետ է ութերրորդը, որի մեջ նշում է եափսկոպոսների, վարդապետների, քահանաների, իշխանների և աշխարհական մեծերի աշխառությունը, կաշռակերությունը և տպիտության հետեւանքով ուղիղ զատաստանը խեղաթյուրելը («ումանք իշխանությունը և ի վարդապետաց և ի քահանայից և ի գլխաւոր աշխարհականաց և իշխանաց, զի աշխառանօր և կաշռոք և տպիտությամբ թիւրեն զուպիդ զատաստանը»²¹)։

Այս հանգամանքների վրա ավելանում են Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հարկա-դրելը Դատաստանադիրը գրելու մասին («բայց եղել պատճառ գրելոյ զամ ի հար-կելոյ զմել Տեղան Ստեփանոսի Աղուանից կաթողիկոսի միանում և երիխում²²), Աֆո-

20. «Թատասահնագիրը», էջ 5—6 (Վահան վրդ.
Բաստամանի հուշապահութեան).

21. Կոմիս. էջ 12:

22. Կայլիս, էջ 17

Հետեւ բացատրում է, թե ի՞նչ է դատաստանը, ո՞ւմ կարելի է վստահել, ո՞վքեր են դատավորները, ինչպիսի՞ն պիտի լինեն դատավորները և դատախազները, ի՞նչ է երդումը, ի՞նչ է վկայությունը: Գոշը այս բոլոր խնդիրների մեկնարանության մեջ Հիմք է Ծննդունում քրիստոնեական ուսմունքը: Նախադրության 9-րդ գլխում՝ հրանանդում է քրիստոնյաներին՝ չղիմել մահմեդական դատաստանի, որովհետև հայր Հավատացյալ է, մահմեդականը կամ այլազգին՝ անհավատ, և ոչ մի կապ չկա Հավատացյալի ու անհավատի միջև, ինչպես չկա Համաձայնություն լուսի և խավարի միջև («Ովհնչ միաբանութիւն է լուսոյ ընդ խավարի կամ զի՞նչ բաժին կայ Հաւատացելոյն ընդ անհաւատին»²³): Այս նեղ, ազգայնական ոգով է շարադրված Դատաստանագիրքը, ինչպես ճիշտ դիտել է Մ. Սքեղյանը իր ժամանակին: Ազգային, կրոնական խորականությունը դրսեռովկել է նաև նորտերի նկատմամբ սահմանած իր կանոնների մեջ: Այսպես, Դատաստանագրքի երկրորդ մասում սահմանում է Հետեւյալ կանոնը. իթե մենիք իր ծառայի կամ աղախնի աշքին խփի և կուրացնի, պետք է նրանց ազգատ արձակի նրանց աշքի փոխարեն, կամ եթե իր ծառայի կամ աղախնի ատամը թափի, պետք է նրանց ազգատ արձակի նրանց ատամի փոխարեն: Եվ այս դատաստանը պետք է անփոփոխ մնա Հավատացյաների նկատմամբ: Իսկ եթե նույն դեպքը կատարվի այլազգի ծառայի կամ աղախնի հետ, այդ դեպքում պետք է ծախել նրանց ըստ իրենց արժեքի, պակաս լամ կես գնով»²⁴:

Այս և համանման խարականությունը
խոռոք է Միթիար Գոշի ընդհանուր աշխար-
հայացքից, այն մտածելակերպից, թե Հայե-
ր տարբերվում էն մահմեղականներից լեզ-
ով և կրոնով, ուրեմն պետք է տարբերվին
անե զատով ու դատաստանով:

«Մասիթար Գոշի աշխարհայցքը և նրա
Խատաստանագրքի ողին Համահնչուն են սո-
վութական այն պայմաններին, սրոնցում
Հշակիվել ու զարգացել է Միխիթար Գոշի աշ-
խարհամբռունումը։ Նրա օրով Զաքարի և
Վիվանի Հայ իշխանները Վրաստանի ժողո-
վրդի հետ միասին Հայ իրկիրն ազատում
և սելջուկների տիրապետությունից և ինք-
ուրույնաբար զեկավարում։ Զաքարյանների
օրով Հայաստանը վերակենագանակում է
ոնտեսապես և բազաքականապես։ Հայ
և նորդականությունն այս պայմաններում
ունի բաժեշտություն է զգում իրավաբանորեն
և աւագորելու իր տիրապետականը և ամբո-

23. *Umijupi*, f. 591

²⁴, Կունիք, մասն. խնդրան. ու. 1-ի. էջ. 343.

անդելու այն Մխիթար Գոշը տեսականորեն հիմնավորում է հայ ֆիուզալականության բազարական այդ մասրումները և դրսերում իր Գատաստանագրքի մեջ, Գրանով պիտօք է բացարել ազգային ներհակությունը, որ տեսնում ենք Գատաստանագրքի մեջ:

Գատաստանագիրքն օգտագործվել է ոչ միայն Հայաստանում, այլև Հայաստանից դուրս, որտեղ ապրել է հայության ստվար հատվածը, ինչպես Լեռաստանում, Պրիմում, Վրաստանում։ Վրաստանի թագավոր Վահանդի գատաստանագիրքը, որը, ինչպես վերը տեսանք, օգտագործել էր Մխիթար Գոշի Գատաստանագրքը, 1835 թվականին մտնում է Ռուսաստանի բնույթնոր օրինքության մեջ։ Այս նշանակում է, որ Գոշի Գատաստանագիրքը մտնում է Ռուսաստանի օրինագրության մեջ²⁵։

Մխիթար Գոշի Գատաստանագիրքն օգտագործել է Սմբատը Կիլիկիայի հայ թագավորության օրինագիրքը կազմելիս։



Մխիթար Գոշի երկրորդ ժողովածուն նրա «Առակներն» են՝ Գոշը, ինչպես ցույց տվինք վերը, թողել է գրական մի շարք ստեղծագործություններ և եղել է հեղինակավոր հասարակական դեմք։ Հենց այն հանդամանքը, որ Խվանեն Անրում հրավիրված եկեղեցականների ժողովին հատուկ հրավիրված մասնակից է գարձնում Գոշին, վկայում է նրա հեղինակությունը և բարձր զիրքը իր ժամանակակից առաջավոր մարդկանց շարում։ Գոշի թողած գրական ժառանգության մեջ «Եռակները» հանդիսանում են նրա լավագույն գրական ստեղծագործությունը։ «Առակները» արժեքավոր ներդրում են հայ գրականության մեջ և արտացոլում են Մխիթար Գոշի ժամանակի հայ հասարակական հարարերությունները, պայքարը, հայ ժողովրդի կենցաղը, իրավունքը, քննադատվում են ընկած բարեկը, տիրողների ննշումը և շահագործումը «Հնազանդյալք-Ներին»։ Մխիթար Գոշը իններով իր ժամանակի հասարակության ծնունդը և այդ հասարակության ներիշխող դասի՝ հայ ավատականության և հոգևորականության գաղափարախոսը, շի բողոքում ժամանակի սոցիալական անհավասարության և դասակարգային ներհակության դեմ։ Հասարակության շերտավորումը տիրողների և հնազանդյալքների՝ նրա համար նրական երեսով է, իսկ պայքարը զորոների վեմ ավելորդ, որովհետեւ հզորներին հազթելն անկարելի է։ Այս միտքն արտահայտել է հետեւյալ առակի մեջ։

25. Վահան վրդ. Բաստամյան—նույիք, էջ 108.

«Երի անդամ աստղերը հավաքվեցին և նրանցից ամենածերերն ասացին։

— Մենք շատ ենք, որեմն ինչո՞ւ չենք լուսավորում ցերեկն ու գիշերը արեգակի նման։

— Որովհետեւ միարանությամբ շենք վարվում—պատասխանեց մեկը։

Եվ որոշեցին նախ հալածել ու փախցնել արեգակին, բայց երբ լուսինը ծագեց, հաղթվելով նրանից՝ աստղերն ասացին։

— Եթե մենք լուսի լույսից այսպես աղոտացանք, ապա ի՞նչ կլինի, երբ արեգ ծագի։

Աստղերը զդացցին և խոստովանեցին իրենց պարտությունը²⁶։

Այս առակն ասում է՝ թեկուզ շատ լինեն և տկար, բայց ուժեղին հաղթել շեն կարողացաւ²⁷։

Գոշը բարողում է հնազանդություն իշխաններին և թագավորներին։ անհնազանդությունը շարիք է առաջացնում և խախտում է իշխաններյան անսահման կարգը ու կանոնը։ «Այսորդիք լուծանին կարգը իշխանթեանն»²⁸։

Դժուններին և անհնազանդներին համոզում է, որ վերնախավիրը նրանց խնամում էն, պաշտպանում են և տախս են ժողովրդին ավելի շատ, բան ստանում են նրանից։ Իր այս հայացքն արտահայտված է հետեւյալ առակների մեջ։

«Եղի երրեմն տրտունչ անդէց, թէ վասն ծննդոց մեր աշխատիմքը, և ստեամբք ժողովեմք կաթն։ և մարդիկ ճմլեալ զպակումն մեր առնուն ի մէնչ զվաստակս մեր ելցուք և այլ մի՛ զարձցուք առ նոսաւ։ Եւ մի ոմն ի նոցանէ իմաստուն ասէ. Ոչ է այդպէս, զի զաւելորդն բան զպէտս ծննդոց մերոց առնուն մարդիկ, և խնամեն զմեզ և զննունդն մեր, զի առնումք շատ, բան թէ տամբք»²⁹։

Գոշը առակների մեջ հնազանդություն բարողելով ժողովրդին միաժամանակ զգուշացնում է իշխաններին զգուշանալ ժողովրդից, որը կարող է իմաստությամբ դորանալ և հաղթել տերերին, հզորներին։ Այս միաբար զարգացնում է հետեւյալ գեղեցիկ առակի մեջ։

«Զրոյն մրշեան արջ փորէք և լեզուաւ ժողովրդ և ուստէր. և նարի մրշիւն սատակել զնա. երթեալ առ պիծակ և զոռեխ, և մժեխ և շանամանձ և բրէտ և առ նման

26. Մխիթար Գոշ, Վարդան—«Առակները», Երևան, 1951 թ., էջ 7։

27. Մխիթար Գոշ—«Առակները», Երևան, 1951 թ., էջ 46։

28. Նույիք, էջ 74։

29. Նույիք, էջ 86, 2։

սոցին և աղաշէ օգնել իրը աղքային: Յաւակցեն, հարկանեն զաշս և զլսելիս արշուն, և հարկանէ գլուխ զբարի, և նեխի և որդունք ևս ծնանին. և ի սաստկովենէ ցաւոց զբերան բացեալ գոչէր և նոցամտեալ յորովայն խոցոտէին զալիսն, և նեղեալ դիմէ ի հոսանս ջրոյ, և անշափ ի ներքս մտեալ հեղձանի:

Դօրութիւն առակիս այսպիսի է. զի հզօրք արհամարեն, և ոչ երկնչին, սակայն իմաստութեամբ զօրանան փոքրունք, և յաղթեն հզօրաց: Բայց այս իմաստութիւն է՝ ի փոքրուց իրը ի մեծաց ճրկնչելա³⁰:

Գոշը որպես եկեղեցական չի խարազանում Հոգևորականության թերությունները, չի խանգարում նրանց, ինչպես Վարդան Այգեկցին եվ իթե մի քանի սակավաթիվ առակների մեջ (Ճ՛կ, Իթ, Զէ, Ճիկ) շեշտում է նրանց թերությունները, ապա դա բխում է նրա՝ Հոգևորականությունը ժողովրդի աշքում բարձրացնելու, նրան զաստիարակելու նպատակադրումից: Նա անթույլատրելի է համարում եկեղեցականներին արհամարհելը և նրանց իրավունքի ոտնահարումը աշխարհականների կողմից և բարձրացնում է Հոգեփառականության դերը: Այդ տրամադրությունն է արտահայտում Հետևյալ առակը.

«Երկիր հայեցեալ ի բարձրութիւն լերանց համարձակեցաւ լինել երկին և ոչ կարաց զլուսաւորս ընդ ինքեամբ առնել նման երկնի՝ և լուսաւորել:

Յանդիմանէ նշանակս զաշխարհականս ոմանս, որ փրուցեալ ի ճոխութիւն իւրեանց, զբահանալից կամին յափշտակել զպատիւ, սակայն լուսաւորին՝ քան լուսաւորեն, նման երկրի, զի լուսաւորի, քան լուսաւորէ»³¹:

30. Միսիթար Գոշ, նույնը, էջ 114, Ճ՛կ:

31. Նույնը, էջ 46:

Գոշի առակների մեջ, անկախ իրենից, օբյեկտիվորեն դրսեորվել է իր ժամանակի բաղարի և գյուղի հակապությունը, դասակարգային հակամարտությունը³² և այլն: Նրա առակների մեջ, ինչպես նզոպոսի առակների մեջ, գործում են մարդիկ, հասարակական տարրեր խավերի ու պրֆեսիալի ներկայացուցիչներ, այլև կենդանիներ, թռչուններ, ճիճուններ, բույսեր, հատիկներ, գետեր, ծառեր, հացարուցիսեր, արև, լուսին, աստղեր և այլն, բայց դրանց մեջ բնականաբար մեծ տեղ են բռնում կենդանիները, որովհետեւ առակները կենդանական վեպի մնացորդներ են, որոնք երկար դարեր պահպանվել են ժողովրդի մեջ: Այս առակների մեջ Գոշը պատմելուց հետո վերջում դնում է առակի բարոյական իմաստը և ընթերցողին հասկանալի դարձնում նրա միտքը:

Գոշի առակների թիվը 190 է: Նա առակները բաժանել է երկու խմբի: Առաջին խումբը անվանում է առասպելական և բարոյական առակներ («Առակք առասպելականը և բարոյականը»), իսկ երկրորդը՝ հորինված, ստեղծագործական («Առակք ստեղծականը»):

Գոշի առակները, բացի այն, որ դրսեռում են իրենց ժամանակի հասարակական հարաբերությունները, պարունակում են բարոյախոսական հրահանգներ, հասարակական արատները վերացնելու նպատակով տրված խրատներ: Այս իմաստով նա հունական առակագրից հետո հանդիսանում է երկրորդը համաշխարհային գրականության մեջ թե՛ որպես առակագիր և թե՛ որպես դիդակտիկ պոեզիայի ներկայացուցիչ:

32. Պրոֆ. Մ. Արելյան— «Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ», Երևան, 1955 թ.:

